

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Դու, Տէր, այսօր վերածեր տնօրինութեամբ քո ի քահանայապետական շնորհ, տուր սոցա նմանիլ Քեզ՝ ճշմարիտ Հովուիդ, դնել զանձինս իւրեանց ի վերայ ոչխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, լուսատու տիեզերաց...» (Մաշտոց ձեռնադրութեան):

Սույն թվականի նոյեմբերի 13-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Էջմիածնի Մայր տաճարում սրբալույս մեռոնի օծմամբ եպիսկոպոս ձեռնադրեց Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց վանքի միաբան վեց վարդապետների՝ համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Նոյեմբերի 12-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում, համաձայն Հայաստանյայց Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի, կատարվեց նորընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն»-ը:

Իջման Ս. Սեղանի առաջ Տ. Վաղարշ, Տ. Վահան, Տ. Սեան, Տ. Տիրան, Տ. Ասողիկ և Տ. Պարգև հոգեշնորհ հայր սուրբերը ուխտում են «հաւատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչեւ ցվախճան կենաց իւրեանց, կալ մնալ հոլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս»:

Ընթերցումից հետո նորընծաներն ստորագրում են ուխտագիրը: Ըստ ավանդության, ուխտագիրն ստորագրում են նաև Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանն ու Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Նոյեմբերի 13-ին, կիրակի օրը, ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու հանդիսավոր ս. պատարագ և կատարելու եպիսկոպոսական ձեռնադրություն: Վեհափառ Հայրապետին, որպես աղընթերականներ, ուղեկցում էին Ծիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ծաքարյանն ու Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: Եպիսկոպոսական ձեռնադրության խարտավիլակի պաշտոնն ստանձնել էր Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հանդիսությունների արարողապետն էր Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Սրբազան արարողություններին ներկա էին Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Եղիշե արքեպս. Տերտերյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, սրբազան հայրեր, Մայր Աթոռի հոգևորականությունը, հայրենի գրողներ, արվեստագետներ, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած սփյուռքահայ ծանոթ մտավորականներ և հավատացյալ ժողովրդի հոծ բազմություն:

Ձեռնադրության արարողությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը:

Ս. Ստեփանոսի սեղանի առաջ սկսվում է ձեռնադրության հանդիսավոր արարողությունը: Արարողության ընթացքին Վեհափառ Հայրապետը նորընծաներին շնորհում է եպիսկոպոսական կոչման յոթ աստիճանները:

«Օրինեցի, օծցի աջ ձեռն Տ. Վաղարշ եպիսկոպոսի»

«Օրհնեալսցի, օծցի ճակատ Տ. Վահան եպիսկոպոսի»

«Օրհնեսցի, օծցի աջ ձեռն Տ. Սեան եպիսկոպոսի»

«Օրինցի, օծցի ճակատ Տ. Տիրան եպիսկոպոսի»



«Օրհնեսցի, օծցի Ճակատ Տ. Առոլիկ Եպիսկոպոսի»

«Օրհնեսցի, օծցի ճակատ Տ. Պարգև եպիսկոպոսի»

Ձեռնադրության արարողությունը շարունակվում է Ավագ խորանի վրա, ուր Վեհափառ Հայրապետը ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը: Ապա նորընծաները, ծնրադիր, դեմքերը դարձրած դեպի հավատացյալների խուռներամ բազմությունը, հրաժարվում են «Աստվածային և երկնավոր շնորհ...» շարականի երգեցողությամբ, հրաժարվում են աշխարհիկ ունայնություններից: Հետո Վեհափառ Հայրապետը կատարում է ձեռնադրության ու օծման կարգը: Նորաօծ եպիսկոպոսներին տրվում է եպիսկոպոսական գավազան ու մատանի:

Ապա ընթերցվում է վերջին Ավետարանը և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է ձեռնադրության արարողությունը:

Ձեռնադրության արարողության ավարտից հետո Վեհափառ Հայրապետը նորընծաներին է տալիս իր հայրական պատգամն ու խորհուրդները.

«Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա և դուք ամենեքեան աղօթս արարէք»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր Աստուծո ողորմությամբ Մենք արժանացանք կատարելու մի սրբազան և խորհրդավոր արարողություն՝ ձեռնադրություն և օծում վեց վարդապետների, երեքը Երուսաղեմի Ս. Աթոռից, երեքը Մայր Աթոռից, որոնք Մեր ձեռնադրությամբ և Ս. Հոգու ներգործությամբ ստացան բարձրագույն աստիճանը մեր Եկեղեցվո կրոնական կյանքի, այն է՝ եպիսկոպոսական իշխանություն: Մեր Եկեղեցվո, և ընդհանրապես բոլոր պատմական քրիստոնյա Եկեղեցիների մեջ հիմնականում կան երեք կրոնական աստիճաններ՝ սարկավագություն, քահանայություն և եպիսկոպոսություն: Մյուս տիտղոսները, որոնք տրվում են, երկրորդական նշանակություն ունեն, կանոնական իմաստով: Ահա այս վեց միաբանները՝ երեքը Երուսաղեմա վանքի և երեքը Մայր Աթոռի, որոնք ստացան այդ աստիճանը, այդ Աստվածային շնորհը Մեր ձեռնադրությամբ: Համաձայն մեր Եկեղեցվո հնադարյան ավանդությանց, նման աստիճաններ տրվում են Ս. Հոգվո ներգործությամբ, կամ ավելի ճիշտ փոխանցվում են ձեռամաբ եպիսկոպոսի, կամ կաթողիկոսի, հատուկ աղոթքներով ե հատուկ ծիսական արարողություններով: Հայոց առաջին ձեռնադրող Հայրապետը հանդիսացել է մեր առաջին Հայրապետը, հենց ինքը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, մեզանից մոտավորապես 1700 տարիներ առաջ: Սա մեծ խորհուրդ է թե՛ կրոնական-հոգևոր իմաստով, թե՛ Հայ Եկեղեցվո ավանդությանց և ազգային ավանդությանց տեսակետից:

Եվ մենք՝ հայերս, անհամբերությամբ սպասում ենք, որ մոտենա երրորդ հազարամյակի առաջին տարին, այսինքն 2001 թվականը, որպեսզի, ինչպես Ռուսաց Եկեղեցին դիմավորեց իր մկրտության 1000-ամյակը, Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը տոնախմբեն ավելի երջանիկ պայմանների մեջ, Հայաստանյայց Եկեղեցվո հիմնադրման 1700-ամյակը: Երանի նրանց, ովքեր կենդանի պիտի լինեն մինչև այդ տարին և պիտի վայելեն վերստին երկնային օրհնությունը և Ս. Հոգվո շնորհները հեղված համայն մեր Եկեղեցվո, մեր ժողովուրդի վրա ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Սիրելի հավատացյալներ, արդեն հայտնեցի ձեզ, թե երեք ձեռնադրյալները, առաջին երեքը՝ Տ. Վաղարշ եպիսկոպոս, Տ. Վահան եպիսկոպոս, Տ. Սևան եպիսկոպոս, հավատարիմ, ուխտյալ և ծառայություններ մատուցած միաբաններն են Ս. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի, ապա երեք միաբանները Մայր Աթոռի՝ Տ. Տիրան եպիսկոպոս՝ այժմ առաջնորդ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի, Տ. Ասողիկ եպիսկոպոս, որ նոր կոչվելու է առաջնորդ Սյունյաց թեմի, որ շուտով պետք է մենք կազմակերպենք, կենտրոն ունենալով նշանավոր Տաթևավանքը, և վեցերորդը Մայր Աթոռիս միաբան և Ս. Հռիփսիմեի վանահայր Տ. Պարգև եպիսկոպոս, որի ձեռնադրությունը այս օրերին մի բացառիկ իմաստ և հանգամանք ունի, երբ մեր ժողովուրդի հոգին փոթորկված է Արցախյան, Ղարաբաղյան արդար դատի հետապնդումով: Նա Ղարաբաղցի է, ծնված է Սումգայիթ և մանուկ հասակից հոգևոր կոչման զգացողություն ունեցած է և աստիճան առ աստիճան բարձրանալով, այսօր ահա արժանացած է եպիսկոպոսական աստիճանի:

Ահավասիկ, մեր նորապսակ սրբազան եպիսկոպոսները, որոնք այսօրվանից սկսյալ կարող ենք ասել, նոր կյանքի ճանապարհով են առաջ ընթանալու: Ճիշտ է, նրանք արդեն վարդապետներ էին, վաստակ ունեին թե՛ Երուսաղեմի սուրբ Աթոռում, և մյուսները Մայր Աթոռում և ապացույցն էին տվել իրենց նվիրումի, իրենց աշխատանքի, սակայն այնուամենայնիվ, ես գիտեմ իմ իսկ անձնական փորձառությամբ, թե ամեն մի նոր ձեռնադրություն նոր շնորհներ է պարգևում, և գուցե ավելի ճիշտ կլինի ասել, որ ձեռնադրվողը վերջստին և ավելի ուժգին կերպով զգում է այն պարտականության բեռը, որ դրվում



Վեհափառ Հայրապետը Ընտանիքը և Եղիշե Պատրիարքը Ցարա ձեռնադրելով եպիսկոպոսների ճեռ

է իր ուսերին: Պարտականության գիտակցությունը, կարծում եմ, այնքան ավելի հզոր է լինում, ինչքան հոգևոր կոչումի աստիճանը բարձրանում է: Իրոք, նույնիսկ մարդկային աշխարհիկ կյանքում, կարծեմ նույնն է պարագան, գոնե արժանավոր մարդկանց համար, ինչքան պաշտոնը բարձրանում է, այնքան մարդ զգում է ինքզինքը պատասխանատու ժողովուրդի, հայրենիքի, այս դեպքում՝ Եկեղեցու հանդեպ:

Անհավասիկ, սիրելի սրբազան եղբայրներ, ես այսօր իմ ձեռքը դրի ձեզ վրա և իմ աղոթքներով հայցեցի, որ Աստված օրհնի ձեզ մի անգամ ևս և իր շնորհները առավել ևս բաշխի բոլորիդ: Սպասում եմ ձեզանից, որ դուք այդ պատասխանատվության գիտակցությամբ հետ այսու առավել ևս քան մինչև հիմա, նվիրվեք մեր Եկեղեցու ծառայության: Երուսաղեմում դուք աբանչելի մի արտահայտություն ունեք միաբանների վերաբերյալ: Ձեր միաբաններին կոչում եք զինվորյալ միաբաններ: Շատ իմաստալի է այս անվանումը: Ձեր պարագային անշուշտ հոգևոր զինվորության մասին է խոսքը:

Թող Աստված օրհնի ձեր բոլորիդ հոգևոր զինվորությունը, ձեզ պարգևի հոգվո և մարմնո լիակատար առողջություն և նորոգ օծեալ պայծառ ձեր ճակատներով, ձեր հայացքը դեպի երկինք հառած գործեք, աշխատեք և բարձրացեք ի փառս Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովուրդի, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Այսպես շարունակվում է ս. պատարագը:

Ս. պատարագի ավարտից հետո նորաօծ եպիսկոպոսների պատվին Վեհարանի ճաշասրահում տրվում է ճաշակերույթ: Ճաշկերույթի ժամանակ նորապսակ սրբազան հայրերին շնորհավորանքի և ուրախության սրտագին խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, Պատրիարք սրբազան հայրը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, «Հառաջ» թերթի խմբագիր տիկին Արփիկ Միսաքյանը:

Ճաշկերույթի ավարտին նորաօծ եպիսկոպոսների անունից երախտագիտության խոսք են ասում Տ. Սևան և Տ. Ասողիկ սրբազանները՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ հավատարիմ կմնան իրենց ուխտին ու Ս. Էջմիածնին, առավել արդյունավետությամբ շարունակելով ծառայել աշխարհասփյուռ հայ ժողովրդին:

Նոյեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, նորապսակ եպիսկոպոսները իրենց ուխտի պատարագը մատուցեցին Էջմիածնի Մայր տաճարում, Ս. Հռիփսիմե վանքում և Երևանի Ս. Սարգիս ու Ս. Հովհաննես եկեղեցիներում:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս ջերմագին շնորհավորում է նորապսակ սրբազան հայրերին, այն հույսով ու հավատով, որ նրանք իրենց ողջ ուժերն ի սպաս կդնեն ի ծառայություն Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի:

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՂ. ՄԿՐՏՉՅԱՆ